

## «Եյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ

ՀՀ, ք Երևան

Նուբարաշեն, 10 փող, տուն 6

ՏԳՀ, Երևան, Մյասնիկյան պողոտա 5/1

Աուդիտորական գործունեության լիցենզիա Թ.ԻՎ ԱԾ N 048 առ 02.08.2006թ..

տրված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից՝ անժամկետ

Հեռ: (010) 57 28 42

### Անկախ աուդիտորի եզրակացություն

Ներկայացվում է «Շտապրուծոգնություն» փակ բաժնետիրական ընկերության ղեկավարությանը

#### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Շտապրուծոգնություն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2017թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2017 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

#### Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-Վարքագիրք) և ՀՀ-ում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող վարքագծի պահանջների, և պահպանել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պահանջները՝ այդ կանոնների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

#### Այլ հանգամանք

Ընկերության 2016թ դեկտեմբերի 31-ի ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե

ղեկավարությունը չունի Հնկերությունը լուծարելու կամ գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն մենք՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հնկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա գնահատում ենք արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների վերաբերյալ էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Հնկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հնկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց հետ աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ որջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:

31 օգոստոսի 2018թ.

Տնօրեն՝

Միլա Պետրոսյան

Աուդիտոր՝

Շուշանիկ Մազույան



**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

<<Շտապրոժոգություն>> ՓԲԸ

2017թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>ԱԿՏԻՎ</b>			
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	4	1,909,996	1,953,936
Ոչ կյութական ակտիվներ	5	-	30,838
Ոչ ընթացիկ հարկային ակտիվներ	17	69,396	59,576
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		<u>1,979,392</u>	<u>2,044,350</u>
<b>Ընթացիկ ակտիվներ</b>			
Պաշարներ	6	20,917	30,087
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	84,767	104,755
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	26,570	18,730
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		<u>132,254</u>	<u>153,572</u>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ</b>			
		<u>2,111,646</u>	<u>2,197,922</u>
<b>ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
<b>Սեփական կապիտալ</b>			
Համալրված բաժնետիրական կապիտալ	9	235,625	235,625
Վերագնահատման պահուստ		1,389,222	1,410,497
Զբաղիված շահույթ (չծածկված վնաս)		(18,084)	(10,508)
Պահուստային կապիտալ		40,811	39,811
Ընդամենը սեփական կապիտալ		<u>1,647,574</u>	<u>1,675,425</u>
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	392,297	414,821
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		<u>392,297</u>	<u>414,821</u>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	28,022	73,359
Եկամուտներին վերաբերող շնորհներ	10	2,971	3,506
Ընթացիկ պահուստներ	12	40,782	30,811
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		<u>71,775</u>	<u>107,676</u>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
		<u>2,111,646</u>	<u>2,197,922</u>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2018թ. օգոստոսի 27-ին: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 9-44)

Տնօրեն՝  
Թ. Ստեփանյան



Գլխավոր հաշվապահ՝  
Լ. Ալեքսանյան

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

<<Շտապրուժողություն>> ՓԲԸ  
2017թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31.12.2017թ. ավարտված տարի	31.12.2016թ. ավարտված տարի
<b>Շարունակվող գործունեություն</b>			
Հասույթ	13	1,441,759	1,452,565
Վաճառքի ինքնարժեք	13	(1,363,275)	(1,474,007)
Համախառն շահույթ (վնաս)		78,484	(2,144)
Վարչական ծախսեր	14	(106,716)	(104,796)
Այլ եկամուտ	15	37,353	88,666
Այլ ծախսեր	15	(44,422)	(15,414)
Զուտ շահույթ (վնաս) նախքան հարկումը		(35,301)	(52,986)
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	16	606	4,984
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)		(34,695)	(48,002)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		7,826	(93,654)
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		(26,869)	(141,656)

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 9-44)

Տնօրեն՝  
Թ. Ստեփանյան



Գլխավոր հաշվապահ՝  
Լ. Ալեքսանյան

*(Handwritten signature of L. Alexanyan)*

ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ


<<Շտապբուժօգնություն>> ՓԲԸ

2017թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Համալրված բաժնետի- րական կապիտալ	Վերագնա- հատումից արժեքի աճ	Պահուս- տային կապիտալ	Զբաղիված շահույթ (չծածկված վնաս)	Ընդամենը
2016թ հունվարի 1-ի դրությամբ	235,625	1,533,252	36,811	16,077	1,821,765
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	-	-	(48,002)	(48,002)
Սեփական կապիտալի ներքին շարժեր, սեփական կապիտալի հաշվին կատարված ծախսեր և հատկացումներ	-	(122,755)	3,000	25,274	(94,481)
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	(3,857)	(3,857)
2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	235,625	1,410,497	39,811	(10,508)	1,675,425
Շարունակվող գործունեությունից զուտ շահույթ (վնաս)	-	-	-	(34,695)	(34,695)
Սեփական կապիտալի ներքին շարժեր, սեփական կապիտալի հաշվին կատարված ծախսեր և հատկացումներ	-	(21,275)	1,000	28,317	8,042
Հայտարարված շահաբաժիններ	-	-	-	(1,198)	(1,198)
2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	235,625	1,389,222	40,811	(18,084)	1,647,574

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: (էջ 9-44)

Տնօրեն՝  
Թ. Ստեփանյան



Գլխավոր հաշվապահ՝  
Լ. Ալեքսանյան

*(Handwritten signature in blue ink)*

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

*<<Շտապրուծողություն>> ՓԲԸ  
2017թ. դեկտեմբերի 31-ի ավարտված տարվա համար*

<i>Հազար ՀՀ դրամ</i>	<u>2017թ.</u>	<u>2016թ.</u>
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	18,730	32,420
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ	1,458,987	1,463,046
Այլ մուտքեր	321	952
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(845,929)	(820,755)
Մատակարարներին և այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ	(284,627)	(307,704)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ՝ բացառությամբ շահութահարկի	(295,445)	(324,587)
Վճարված շահութահարկ	-	-
Այլ վճարումներ	(18,374)	(18,426)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	14,933	(7,474)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	(5,895)	(2,359)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(5,895)	(2,359)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վճարված շահաբաժին	(1,198)	(3,857)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(1,198)	(3,857)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/ած	7,840	(13,690)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	-	-
Դրամական միջոցների տարեվերջի մնացորդը	<u>26,570</u>	<u>18,730</u>

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

(Էջ 9 -44)

Տնօրեն՝  
Թ. Ստեփանյան



Գլխավոր հաշվապահ՝  
Լ. Ալեքսանյան

*(Handwritten signature)*

*«Շտապրուծողություն» ՓԲԸ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվետվությունների աուդիտ*